

այս խնդրում չհետեւեց իր ուսուցչին, սակայն ինքն էլ մի քանակաւ եղանակ չգտաւ մինչեւ օրս, որ կարողանար ուսուցչի գտած և մատնացոյց արած վտանգի առաջը առնել: Նա այժմ դործադրում է նիւթերի մշակման այդ ձևը, որը Յիւլէրի կողմից իրաւամբ դատաւարութեան է արժանացել: Հետեւաբար կարելի է Յիւլէրի տեսակէտներից առաջնորդուած՝ նրա դպրոցի դործադրած մեթոդը ս'սալ համարել, որովհետեւ այդ մեթոդը, ինչպէս Յիւլէրն է ասում, «դանդաղեցնում է» ուսուցումը և աշակերտի մէջ այն հաւատն է արթնացնում, թէ «դասը կանգ է առել»: Յիւլէրի վտանգի այս գիտակցութիւնը մենք ևս համարում ենք տեղին և իրաւացի, սակայն նրա առաջարկած միջոցը չեն ընդունում յարմար բացասականը վերացնելու համար. նա դեռ կայ, ուստի և ձեռկան աստիճանների ներկայ դործածութեան ձևը անընականը, «դանդաղեցնող» և ձանձրացնող է: Ձեռկան աստիճանների հետ կապուած սնունդի միջոցները հնարաւոր է միմիայն այդ աստիճանների չզոյժածութեամբ կամ սերժմամբ չեղարացնել:

(շարունակելի)

Գ. Էդիկեան

ԳՐԱԿԱՆ—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԱԳՈՒԼԻՍԻ ԵՒ ՇՐՋԱԿԱՅՔԻ ՁԵՌԱԴՐԵՐԸ.

(շարունակութիւն)

Թ. 28.

ՅԱՅՍԱՄԱՈՐԻՐ.

(Ժգթ. բօլորագիր. թւի. գրչթ. ՌՃԽԹ).

Հա Որոց աղօթիւքն ողորմի ք՞ս ստացողի զբոցս՝ մահտեօի սարգսին ամատուենան. և ծնողացն պետրոսին և սիրամարդին. և եղբարքըն մինտօին մ՞րաբոսին և մհ՞տսի յովանէօին և կենակցացն. և որդոցն՝ ըստեմօանին, կարապ՞տին և Գէորգին. և ա՞մ արեան առաւ մերձաւորացն. կարդացողիս և շօղացդ:

506ա Որոց աղօթիւքն ողորմի քս ստեցիլի գրոցս՝ մահա-տեսի հախնաղարին, և իւր հաւքն պէտրոսին, և եղբաւքն զու-կասին ծնողացն և այլ ա՞մ արեան մերձաւորաց նաև գծողի սորին կարգացողաց և լսողաց և որք զողորմ'':

(Սոյն երկու յիշատակարանները բազմիցս կրկնուած են էջերում):

294ա Որպէս զգառն էր անմեղուկ (Խտհակ): Կայր սպա-նողին առջև հեղուկ, որգիս ունէր. բ. մանուկ. մինն էր յի-մար միւսն խափով:

295ա Կարգայ և գիտ գառաքինին՝ որ կին էառ զիւր քեռորդին, գօտէմարտեալ ընդ միշտ էին բայց կարճեցաւ ջիւն ի տեղին:

295բ Կուժն և բրուտն կուռեցան. կուժն զբրուտն ա-րար կալման. բրուտն արար կալման, ի յաճ կժին սհմն զինքն խեղաց և արար նշան:

297բ Արեղական նման իշխան, եղբայրք ունէր ինք մե-տասան. թէպէտ եկաց շատ ի զնտան, շատոց ի սովն էսճ սեղան:

298բ Եւ անարժան գրչի քրիստոսատուր զպլի և ծնող՝ իմոց՝ և օրինակիս շնորհողի. և թղտիս կոկողի՝ և այլ ա՞մ արեան գրողաց. կարգացողաց. և լսողաց. և որք զողորմին ասեն ամէն:

Մեղաւոր եմ և եղկելի՛. և ս՞ք հոգին յինէն փախչի. անմեղադիր լերուք ինձի. սղալանաց և աքուստի:

506բ Փահր և երկրպագութ՞ ին. գողութ՞ ի, և բարե-բանութ՞ ի (մի էջ հոգևոր խորհրդածու-թիւնից յետո՛) Ա՛րդ՝ ո՞պ գատեաց բանս՝ բազմատեսակ է բարւոք ճաշի ընթանալն. որքան անսայթաք լինիցին մատա-կարարք, և ընկալեալ ունիցին յինքեանս զհոգոյն վտակս՝ բազմադիմի բուսուցանեն զըոյսս բարի յանդատտանս իւր՞ց: Քանզի ի սոյն հոգւոց շարժեալ՝ և լս՞հ բարի ար՞լ մ՞հի այլսս ա՞ծառէր զհեղահոգի մ՞հի հախնաղարն՝ յիշելով զբան մարգարէին որ ասէ. երանի որ ունիցի զ՞ւկ ի սիոն. և ընդա-նի յէ՞մ. որ է յեկեղեցի յերկրի. և գտիւրապարգև զարդա-րաժողով վաստակս իւր զ՞ ծախեաց ի գործ գարշելիս, և ոչ խորոփորեաց զերկիր թաղելով ի նմա, որոց ժանկն լինելոց է գատախաղ աւուրն անաջառութե՞, և զ՞ ծրարեաց ի վար-շամակի անաղատական տմադրութ՞ը գտաղանդն արծաթոյ. որոյ պատասխանին ծառայ չա՛ր և վատ, և վայելումն ար-

տաքինն խաւար: Այլ զարծաթն իւր անցաւոր արկ ի տրապէզս գործոյ որոյ շահն ոչ կրկին և եթ, այլ բոտ անսուտ բանին որ ասէ. հարիւրապատիկ աստ այսմ աշխարհի, և զապագայիցն զերկնից ժառանգութիւնն ընդունել: Եւ զի սիրեաց զհրամանն տէն որ ասէ. դանձեցէք ձեզ գանձ յերկինս ուր ոչ գող մերձենայ, և ոչ ցեց ապահանէ, զի սւր գանձք ձեր է անդ և սիրտք ձեր եղիցին: Ա՛րդ ստացաւ զգիրքս պիտանի այրս մհի հախնաղարն, որ կոչի յայսմաւուրք՝ զսր կարգեալ է ի յետին ժամանակիս մեծ զգրպան գրիգոր ծերենց կոչեցեալ քաւմ ջանիւ և աշխատութեք ուղղեաց և հաստատեաց ի մէջ եկեղեցւոյ. զի անաշխատ առաջնորդութեք հասուցանէ ի կատարումն տարոյն: Ա՛րդ՝ աղաչեմ զդասս քրիստոնէից՝ մանաւանդ զճշմարտախորհ քհնկայ որք հանդիպիք այսմ խորհրդաւոր սովերիս յիշեսցիք զստացող սորա զենւոյն Գի. զմհի հախնաղարն, և զհայրն իւր զպետրոսն՝ և զմայրն իւր զանաղան և զեղբայրն իւր զղուկասն զղուկասն և ա՛մ աղգայնօքն հեռաւորօքն՝ և մերձաւորօքն՝ զկենդանին՝ և զհանգուցեալսն. զի մեծաւ յուսով և կէտի հաւատով ետուն գրել յշտի հոգւոց. և ի քաւութե՛ ի սխանաց. և ի բարեխօսութե՛ ի անձանց, և ո՞պ յիշէք առ տէր. յիշէք և գուք ի նոյն տէնէ յսէ քնէ, ամէն: Ա՛րդ՝ գրեցաւ սա ի Յամի թուարեւութե՛ հայկազան սեռի. Ռ. ճ. Խթ. ին: Ձեռամբ անարժան նուաստ՝ պղերգ՝ և անխմաստ Թարմատար գրչի՝. քրիստոստուր գպրի, որ միայն անուամբ կոչիմ և ոչ գործով. ո՛վ սէք հայրք և եղբարք՝ խնդրեմ ի ձէնջ երեսայթաւալ և արատսուաթոր աչօք աղաչեմ ի ճշմարիտ ծառայիցդ ա՛յ, յիշեսցիք և զմեզ առ տէր սեռն սիրով. ի միտս, բարիս, և զծնօղսն իմ. և զբեռսն իմ զտէր աւետիս կուսակրօն արեղայն. և զմիւս քեռքս իմ, զտէր գէորգն, և զտէր սիմէոնն. և զհանգուցեալ հայրն իմ զմեւրոնն. և զմայրն իմ զհռիփսիմէն. և զքոյրս իմ զմանուշակն. նաև զուսուցիչսն իմ, զյովսէփ տիրացուն և զտէր Գէորգ քահանայն: Եւ եղև նբաղրութե՛ մատենագիր յիշատակարանիս ի մեծ, և ի հոյակապ մայրաքէջքս քաֆայ. ընդ հովանեաւ սէք օգսէնդ բարձրաշէն տաճարին: Գրձի յերեսանկեալ աղաչեմ զձեզ ո՛վ ընթերցողք. յիշեսցիք ի մարբափայլ յաղօթս զստացող ո՞ք գրոցս զմհի հախնաղարն, և զհայրն իւր զպետրոսն, և զեղբայրն զղուկասն, և զծնօղսն իւր, և ա՛մ արեան մերձաւորսն, որ ստացաւ զսա մհի հախնաղարն ի հալալ վաստակոց իւրց և եդ ի գրունս . . . (ոչինչ չի գրած) Յիշատակ անջնջելի աղատ՝ աղատ՝ ոչ որ չուէի իշխանութե՛ ի գրուե-

լոյ. կամ ծախելոյ. և թէ որ յանդգնի և ձեռնամուխ լինի նա՛ պատժի յա՛յ. և Գձ. ԺԸ. հալոց անէծքն ու և զխաչա- հանողացն առցէ: Այլ խնամով պահողքն ահլ եղիցին ա՛յ: Դ՛րձլ կրկին պաղատանօք աղաչեմ յիշիլ զպարոն յարութ՝ ինն, որ քա՛ւմ աշխատութ՝ը փողի ձեռնտութ՝ը. թե և թիկունք լինելով և զմեզ մխիթարութ՝ը. երթեալ առնելով վ՛ս սիրոյն ք՛ի և ս՛րց մր՛տրոց աղօթիցն. սկսեալքս յանգ հասեալ կ՛տրծք՝ և զալքն յարութ՝ ի և զստեղ ս՛ր յայսմաւուրքիս մ՛հի հախնազարն աղաչեմ ո՛վ ս՛ք ընթերծողք յիշեսջիք մաք- րափայլ յաղօթս ձեր միով հայր մեղայիւ. և ա՛րն մեր յս ք՛ս միւսանգամ դալստեանն զյիշե՛լքս և զյիշողսդ՝ անթառամ սրբոց պսակին արժանի արարոցէ և լսել տացէ զամենահեշտ բարբառն սր ասէ եկի՛ցք ա՛հլք հօր իմոյ ժառանգեցէք պատ- րաստել ձեզ զարքայութի՛նն յերկնից ամէն. Հայլ մեր որ:

508^ա Զամի ներմարմնութե՛ս Տ՛ն 1789. և ի թուա- կանութե՛ն հայց՝ ՌՄԼԸ, մեծահոշակ և գերահրաշ վանքն որբազնաս՛ք Առաքելոյն Թօմայի, որ է կառուցեալ ի յերկրին նախիջնանու, յայսմ ամի ասպատակեցաւ ի չար և անօրէն տաճկացն զօրաց, և զա՛մ զինչս ս՛րջ վանիցն՝ Աւար առեալ, և տարեալ ի յերկրին Նրեանու, վաճառեալ էին անդ զա՛մ եկ՛զցին զսպաս, և կամ զայլ ինչս Ս՛րջ վանիցն: Իսկ ս՛ց լուեալ զայս համբաւ բօթալի, կարի յոյժ ցաւեցեալ էին. վ՛ս զի, է տուն հոգոց պայծառ իշխանադուն իշխան նախնեացն իւ- րեանց, որք իշխեալ էին երկրիս յայսմիկ, իշխանք դուով ժա- մանակաւ. և կացեալք են ընդ հովանեաւ ս՛րջ վանիցս, վ՛սյ մեծաւ փափագմամբ, որոնեալք էին յուղելով, թէ դուցէ դտանիցեն զսպաս ս՛րջ հրաշակերտի վանիցս. և առեալ զայն վերագարծուսցեն ի ս՛ք վանս. բայց՝ ոչ են դտեալ զինչ ի սպասու ս՛րջ վանիցս, բացի յայս յայսմաւուր գրքէս, որ զայս ևս զոմն Թիֆլիզեցի առեալ և տարեալ է ի Թիֆլիզ. որ ս՛ց զայս տեսեալ հալալ արդեանց իւրեանց գնեալ, վերքս- տին նորոգեցուցեալ ետուն յիշատակ ս՛րջ վանիցս՝ Թօմայի Սրբազնաս՛ք Առաքելոյն. և խնդրեմ ի պատուելութենէ ձերմէ. որք հանդիպիք ընթերցման ս՛րջ մատենիս, յիշեջիք ի մաքրա- փայլ յաղօթս ձեր զնուսնուսեցի. նաև զհալապեցի կոչեցեալ զամատունեան մհ՛տսի Սարգիսն. և զհանգուցեալ ծնողսն նորին, զպետրոսն և զսիրամարն, և զհանգուցեալ եղբարցն՝ զմինասն, մարտիրոսն և զմհա՛սի յովանէսն, և զկենսակիցսն:

և զԷկենդանի զորդին, զՍտեփանն, Կաբապետն և զԳէորգն, և զայլ արեան ասու մերձաւորսն նոցին, և յիշողքս՝ յիշեալ լիջիք ի քսէ աւուր մեծի դաւրտեան իւրոյ ամէն:

Մի քանի էջերում կա գրքի ստացողի հետեւեալ կնիքը.
«Պետրոսի որդի մուղղեսի Հախնաղար»:

Թ. 29.

ՅԱՅՄԱՆՈՒՐԲ.

Մագաղաթ բոլորագիր. Թւի. ՌՃԻԹ. (ա՛. էջ. 560^ա)

1^ա (Ժամանակակից գրուածք) «Այս է Յիշատակ նոր Բայեաղիտ քաղաքացի. Մանուէլ Սարնդիււեանց»:

4^ր և ըստացողիս գրուս նախիջեանցի էլիքսանին և գողակից յոռոփսումին և որդոցն աթանին և մաթոսին և դրսերացն Սալպուն մաթիաին և ամենան արեան արու մերձաւորաց և Լնթերցողաց ա՞ծ ողորմի ասցողաց ա՞ծ ողորմի որ ետ յիշատակ ս՞ք թօմայ առաքելու պարզ է ամէն տեղիս գրել:

362^ա «Եւ զանպիտան ծրողիս կոստանդ ք՞հիս. և ծնողն իմ մարեան հայրն իմ ա՞ք մանուէլն և քերց իմոց, և կարգացողաց և լսողաց և որք զամէնն ասէք:

559^բ Յիշատակարան սուրբ գրոցս.

Փառք հղօրի, անմահի, և ահաւորի, վեհի և մեծի, անհատի, և անճատի, անսահմանի, և անպատմի, անպ'րագրի՜ և անորակի, անքանակի, և անձրելի, անչափի, և անթ՞մնկի, եռակի, պարզ և անպարունակ, ս՞ք և յըստակ. անվճիռ. և մաքուր. համադոյ ս՞ք երրորդութե՞ն յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Ծայրալիք սլարադրականի, ըստ առաջնորդականին, քանի յուղիղ ուղեորութիւն, յառաջնորդել անսայթաքաքար ուստք ի նպատակամաց, և ի աւարտման եկեղեցական տառից, որ է լրումն հոգևոր տօնի, և պատմիչ հրաշագործ հրաշից և մեղ նախանկար, ա՞ծ ահրաշ աւանդից: Ի սկզբանն յառաջ քան զիինէին ար՞քոցս, հրաւիրմամբ յորդէգրութի՞ն ձեռն յի՞ ք՞ի, և որ նովաւ վերերեւեցան, ս՞քք, և սիւնք, ճշմար-

տութեանն, շինողածոյ տանն, և յարկի ան ան, և ի նա յարեւոյ անդամոց և ի մեզ շարունակութիւն կցեւոց ի գլուխն քս: Մեք ի նա, որպէս ճշմարիտ բան նորա: Զայստիկ, զանբաւելի և զանառի հանգամ մտաց մարդոյ տեղեկութեան: Բաւ ընդակապէս. ի սմանէ առաւելեալ. ծանօթանայ և զըւարճանայ եկեղեցի ան, տօնելով օր ըստ օրէ, ի բաւընդակ տարոյն հոգաբանութիւն. տալով տըւողին զհոգեւոր ձերս, և զպարզեւ հոգեւորական: Այլ և արք ի վերծանութիւն սքանչելեաց ա՛մ արեամբ ներկեալ մարտիրոսացս, յորս և յիշատակի գերահրաշ տօնք ա՛րքունականք, և առաքելականք, և մ՛բդրեականք, և երկնագումար, արեամբ ներկեալ մարտիրոսացն, և վկայիցն, և ս՛բ կրօնաւորացն, և ս՛բ կուսանաց, աբանց և կանանց, զոր ի սմա հաւաքեալ կան. բոլոր շրջան տարոյն, ի պայծառութիւն եկեղեցոյ մանկանց. ի զարդ և ի դաստիարակութիւն ք՛հից բաշխողաց մարմնոյ և արեան կենարարի որդոյն ան: Եւ առ. յիշատակ ննջեցեւոց, և զուարճութիւն տօնողաց, որք սոգաւ հրճուին ի կեանս. լուսատար միկ, վկայեցեւոց անձանց սրբոց, զի տօնասիրացն պարտ է զըւարճանալ ի կեանս իւր մինչև յաւիտեան, և յաւիտեանս յ՛ւանց.

Ա՛րդ, գրեցաւ, տառս ա՛ ծապատում, ի գեօղն, կից, ընդ հովանեաւ ս՛բ Ստեփաննոս նախավկայ, եկեղեցւոյն, և այլ սրբոց նահատակացն որ աստ կան հաւաքեալք ի մի. եւ գ՛րձ յիշեցէք զծրօղ սորայ, զկոստանդ ք՛հն զծնողքն իմ և ա՛մ յարեան մերձաւորաց զկենդանիս և զհանգուցեալսն ի քս: Ով հարք և եղբ՛բ յորժամ հանդիպիք սմայ կարդալով կամ օրինակելով յիշեցէք ի մաքրափայլ աղօթս ձեր, և դուք յիշեալ լիւր ի քսէ այ մերոյ:

Եւ արդ. գրեցաւ, սա. ի թըւականիս հայոց. Ռ՛ ձիթ: որ գրեցաւ գիրբս:

608^ա Յիշատարան գրոցս, յայսմիկ որ այժմ յայմէ՛ ուր կոչի:

Փառք ամենասուրբ ամենազօր և կենդանաբար ս՛բ երբորդութե՛ն հօր և որդւոյ և հոգւոյն սրբոյ, այժմ և միշտ և յաւիտեանս յ՛ւիտենից ամէն:

Սոյորդութիւն է ա՛ ծային արանց՝ միշտ և հանձնալ խողալ յա՛ ծային պատուիրանս ի տ՛ւէ և ի գիշերի միշտ զվերինն խորհել ուր քս նստի ընդ աջմէ ան: Եւ զ՛ս բազում պատճ՛ռի բազում փափաղին ջերմեռանդ սիրով և քղձալի ցանկութե՛ն արգիւնս և գործս կատարել:

ա. Նախ վճարող յաւելտենական և անմահ կենացն զանցաւորս արհամարհեն, և զայն ստանան կեանս, որ մնացական է, ո՞ւր ասէ տէրն երթայք դորժեցէք մի՛ զկորստական կերակուրն, այլ զկերակուրն, որ մնայ ի կեանսն յաւելտենական:

բ. Երկրորդ զի մեք ապականացու և մահկանացու գորով, ոչ նոյնպէս կամք մնամք, որպէս ասէ մագրէն. պանդուխտ և անցաւոր եմք ո՞ւր ամ մ հրքն իմ. ստանամք զգիրս զի անապահան կենացն արժանի լիցուք շնորհօքն ք ի:

գ. Երրորդ զի հրէ մէջ տէր գտնձեցէք, ձեզ գանձ ի յերկինս՝ որ ոչ ցնց և ուտիճ ապականեն, և ոչ գողք բական հատանեն գրեմք զգիրքս՝ որ զամ գանձ ի յինքն պարունակեալ ունի: Նախ զվերին իմաստութիւն և զամ մքս որ գրեւն ի սմա:

դ. Չորրորդ վճարող պայծառութե՞ն եկեղեցւոյ և նորոգութե՞ն նորոյս սինի որով միշտ գրովք տ՛ճայնով լուսաւորի. ո՞ւր ասէ տէրն տիմոթէոսի ի գալն քո զմատեանսն բերջիր որ է գիրք ի յայս միտս գրեցան ամ հին և նոր կտակարանք:

ե. Հինգերորդ վճարող օգտութեան և բարեգարգութեան իմաստութե՞ն հանճարոյ, և տ՛ճալաշտութե՞ն մօնկանց նորա եկեղեցւոյ. զի ամ ուսումս և առաքինութիւն, տեսական և գործնական տ՛ճայն գրովք լինի. ո՞ւր ասէ պօղոս՝ զգիրս սքս գիտես որ կարող են զքեզ իմաստուն առնել:

զ. Վեցրորդ վճարող բարեխօսութեան միշտ անդադար առ տ՛ճ. զկենդանի բանս տ՛ճայն գրեմք և մարմնացնեմք ի քարտիսի, ո՞ւր բանն տ՛ճ մարմնացաւ և վերկեաց զմեզ յամ չարեց և տանջանաց, և արժանացոյց անմահ կենացն, նոյնպէս և բանս գրեալ հաւատով, և յուսով զամ խնդրուածս մեր կատարէ աստ և ի հանդերձեալն:

է. Եւթնորդ զի պատմութիւնս սրբոցն որք ի հնումն և ի նորումն կտորցն, որ զի համարձակութիւն ունին առաջի աջ բարեխօսել միշտ վրան անձանց մերոց, այժմ և ի յաւուրն զատաստանի:

ը. Ութնորդ վրան անջինջ յիշտկութեան առաջի աջ, ոչ ունելով մարմնաւոր զաւակ զոս ստացաք մեզ զաւակ, և յիշատակ անմահ, որպէս ասէ մարգարէն. երանի որ ունեցի զաւակ ի սին և ընդանեակ յամ:

թ. Եւթնորդ վճարող քաւութեան և թողութեան մեղաց մե-

բոց քննութեամբ սրբոցս, որպէս ասէ արարէք պատուոյ արժանի ապաշխարութեան, և մարդարէն ասէ զմեզոյ քո ողորմութեալ քաւեսցես և զանօրէնութիւնս քո արօք անանկաց:

Ժ. Տասնրորդ, վասն պատուելոյ զտօնս ըզաբունական և զսրբոց. ստանամք զճառս և զպատմութիւնս նոցա, և զարդարեմք ոսկով և զոյնզգոյն դեղով, և երանգովք, ո՞պ ասէ տէրն զաղբատն յարածամբ ընդ ձեզ ունիք, զիս ոչ ունիք ընդ ձեզ:

Ժա. Մետաքաներորդ՝ վասն տօնախմբութեան և ներբողական գովասանութեան իւրաքանչիւր տօնի և յաւուր կատարման՝ ստանամք զգիրքս, ո՞պ ասէ սոգովմոն ի գովութիւն արդարոց ուրախանան ժողովուրդք. և զաւելթ յիշատակ յաւիտենից եղիցի արգար, և պօղոս ի պէտս սրբոց հաղորդեցուք:

Ժբ. Երկոտասնրորդ, վասն ի նախանձ և ի փափագ շարժելոյ զայլս ճշմարիտ արդեանց, և բարի գործոց, որպէս ասէ պօղոս՝ նախանձաւոր լեբուք շնորհացն որ լաւն են: (մինչև այստեղ և շարունակութիւնից էլ գեռ մի մատ արտագրուած է Թ. 27 ձեռագրի յիշատակարանից, որը զանց ենք առել գրի առնել մեր կողմից, տ'. էջ 31):

Ըստ այսմն յարացուցի, ամենագովելի նշանիկ ընտրեալ պատուելի և ա՞ծահաճոյ ա՞մ գովութեանց արժանաւորեալն ս՞ք և քաջ հռետորն և արեաջան բարունապետն սիմէոն յոյժ սիրելի գտե՞լ ա՞մ սրբոց ի տօնախմբութիւն անյապօղ առանց ձանձրանալոյ մի ըստ մեծէ կատարելով զտօն սրբոց, նահապետաց, նախահարց, սրբոց մարդարէիցն, մինչև ի խոնարհելն որդւոյն ա՞յ, և իջանել յերկնից կամաւ հօր և ս՞ք հոգւոյն գալ ընակել յամէնա՞հնէ՞լ ս՞ք կոյսն մարիամ աւետեօքն գարրիէլի: Եւ զս՞ք ծնունդն ք՞ի, և ս՞րոց առաքել՞ցն, ս՞րց մարտիրոսացն, ո՞րց հայրապետացն, ս՞րց ճգնաւ՞րցն, Եւ ս՞րց Թ՞գրացն, և կուսանացն, կատարեալ և ընտիր օրինակ առաջին վ՞գպտքն փարթամացուցեալ էին նորահրաշ պատմութեամբք սրբոց, և զարդարելով զա՞մ տօնս տ՞րունական, զաւետեաց, զճննդեան, զա՞նքնդառաջին, զայլակերպութեան, զա՞ծածնին, զխաչին և զխաչ գիւտին: Ուտի և մարդիկք եղեն ցանկացօղք մեծութեան և փառաց. թէպէտ և ըստ զանազան բարուց ներգոյացելոց անորժակաց մարդկան ի յանձնիշխան կամաց հարկեալ շարժեցան: Մարմնասէրք ի մարմնաւորսն: Որպէս և ոմանք ընդ ծով անցուցանելով զանհուն ալիսն և զանդնդախորդ ետեղութիւն ջուրց


ոչինչ վարկանելով, և ընդ ցամաք գնալով դոտալ տագնապի և զաշխատութիւնս յոլովս յանձն առնելով: զքաղց և զծաւաւ միանգամայն խի կրելով, ոչ եթէ ընդունայն կամի չար ինչ այլ վասն իրաց ինչ հասանելոյ որ է մեծութիւն և ժառը ինքեանց: Եւ ա՛ ծասէրը ի հոգեւորսն, զմահ իսկ գլխովին. նաև զմարտ յանձին կալեալ զիմեցան ի մրցմունս բանտից և կապանաց, որք և քաջացան ընդդէմ՝ բռնութեանց չարին, և զա՛ մ արհամարհեալ զդէն՝ և զմեքենայս նորին: Ոմանք յանապատի մոլորեալք, և ոմանք ի ժապլճս երկրի ենթասուղեալք, և ոմանք ընդ ընտանին զազան ի մարտ մոտեալ մինչև ողորմութեամբն ա՛յ ա՛ մի զօրացեալ կարողք եղեն ընդունել զոր խոտտացաւ անսուտն շրթամբք ա՛ր մեր յա՛ քա՛: Վա՛ս որոյ և անջինջ և երկնուտտ պարզ և որ կոչի յոյսմաւուրք. յիշատակ դաշտեցի, *) զրիգորի որդի մարտիրոսին, եղբարցն, Բու՛նեաթին, միւրաշին, յա՛լնիսին, և հանդուցեալ ծնողացն նոյն վերգրեալ հօրն զրիգորին. և մօրն զԷլֆուն, և կենակցաց առցին. մարթապին, խուպանին. հաղտուն. փարուն. և որդոցն. օհանջանին. մալխատին, և ալդուլի, և դստերացն. սոցա, մախմուրն, հուիսիսմէն, մա՛րեանն, ոսկին, զԷլֆին որք կամակեցք եղեն, և յօթ՛րեցան, յորդ՛րելով զմիմեանս, հ՛լալ ընչիւք իւրեանց ըստացան դստ յիշտի իւրեց և ծնողաց իւրեց, և ետուն ի վանս սա՛րսն թումայի առաքելոյն մխեցեոյն ի կողն յի՛, զոր ա՛ր ա՛ ծ մասնակից և պսակակից արասցէ յիլ զկենդանիս և զհանդուցեալսն զվերույի շեցեալքս իւր անձառ փառսն յարադուարճ բերկրանօք հա՛ղ և մա՛նսլ, ի թումականութեանս հայոց, հաղարբորդի, հար՛ւրորդի, երեսնբորդի, և չորրորդի, յամսեանն, սեպտեմբերի, Ի, և ի կաթիլսութեան բարձրագահ աթոռոյն սրբոյ Էջմիածնի տնառն եղևազարու պատուական հա՛յրալ: Ի թաղութիւնս պարսից, շահսուլէմանին: Եւ առաջնորդութիւն արքեպս՛կոպոսին, Յոհաննու, դողթնեաց, զիտի: Դա՛րձլ յիշեցէք զվանից, միւրա՛ն կրօնաւորս, Մովսէս զա՛րդպտն, զտն՛կերացի կուսակրօն զա՛ր մանկա՛րն, զսպահանցի, զա՛ր եսային, և ասպտցի, զա՛ր պօղոսն, և զա՛ր սոփիանոսն, և նորընծայ, կուսակրօն արեղայ, ա՛ր յովսէփն, զա՛ր պօղոսն, զա՛ր զսոփիանոսն, զա՛ր

*) Դաւոս գիւղը գտնուում է Վերին Ագուլիսից դէպի հարաւ քառորդ ժամ հեռու. այժմ կոչւում է Ներքին Ագուլիս: Վերին եւ Ներքին ածականները վերջին ժամանակներում են տրւած. հնում կար Ագուլիս եւ Դաւոս:

մաթէոսն, և զտ՞ը փելիկպպոսն, և զտ՞ը յովսէփն, և զպիրը սորա յովանէսն, և ալթուին, որ միամտութ՞ք, բարձեալ զնաչն յե՞ ի յուսս իւրեանց և ծառայքն ս՞ը ուխտիս: ամէն: Եւ գ՞րձլ յիշեցէք անարժան ծրու սորա և զծնողսն իմ, և յորժամ կսրգալով և կամ՝ օրինակելով յիշեսջիք ի մաքրաւիայլ յաղօթս ձեր և զուք յիշեալ լինիջիք ի ք՞է ս՞յ մերոյ:

609թ Ես Վաղարշապիաթու Եջմիածնէցի Տիրաց՞ւ յա-
կորս իմ յօժար կամովս եկի հրաշափառ վանս սրբոյն թօմա-
յի յաղակս կրօնաւորութեան անժ իւր ամենափառող զօրու-ք՞ն
խոնարհութիւն և համբերութիւն տացէ ով որ որ այս գիրս
ընթեռնուք կամ արժարծէք ունիք պարտականութիւն լիա-
բերան ասել անժ ի կարգ քահանայութեան արժանի արացէ
իւր քաղցրութեամբն:

Յամի Տ՞ւն 1812 և յամսեանն գկ՞տքրի Ժ՞եկն և այսմ
գողթան գաւառիս իշխողն մերդայ անմատն էր և աթոռոյս
վէքելգարն ջուղայեցի գալլաքեան պօղոս վարդապետն էր
բայց սղալանացս ներել մաղթեմ ընթերցօղացք:



ՅՈՎՀԱՆՆԷՍ ԹՈՒՄԱՆԵԱՆ

(Շարունակութիւն)

V.

Հոգեկան խաղաղութիւն եւ ինքնալրացում.

Հոգեկան տանջանքը տեղի է աւելիս մի ամբոյիչ խաղաղու-
թեան, երբ Յովհ. Թումանեանը թեակոխում է իւր հայրենի եզերքը՝
Ի՞նչ նշանակութիւն ունի նրա համար հայրենի եզերքը կամ,
այլ կերպ ասած, ի՞նչ է հայրենի եզերքը:

Դա մի գերազանցօրէն հաւաքական—հոգեբանական երևոյթ
է: Հոգով, մտքով, զգացմունքներով ու յոյզերով իրարու հետ կա-
պուած մարդիկ զգում են մի անհուն բաւականութիւն իրենց շըր-
ջապատի մէջ: Այդտեղ ամեն ինչ հարազատ է, ընտանի բնու-